

ՏԵՂԵԿԱՏՈՒ

DIEGHIEGAIDOU

ديغيجادو

Հրատարակություն Գահիրեի ՀԲԸՄ-ի

للمدرسة المصرية الخيرية الأرمنية العامة



ԿԻՆՔԱՆԸ ԲԻՀԱՄ ԱՖԻՖԻԻ ՎՐՁԻՆՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ <i>Մ. Երամեան</i>	1
ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿԵԱՆԻ ԽՕՍԶԸ	2
ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ <i>«S»</i>	3
ՀԲԸՄ-Ի ԳԱՀԻՐԵԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՏՈՔԹ. ՎԻԳԵՆ ԾԻՉՄԵՃԵԱՆԻ ԽՕՍԶԸ	5
Մարած ճառագայթ Մը՝ ԱՐԱՔՍԻ ՏԵՕՎԼԵԹԵԱՆ <i>Մ. Երամեան</i>	8
ՓԱՐԻՉԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՔԱԾՈՆ ԹՈՒԱՅՆԱՅՈՒՄԾ	9
ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԼԵԱՆ <i>Չրոյցը վարեց՝ Մ. Երամեան</i>	10
AVC-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀՈՒՆՁԶԸ	13
«ԱՐԱՔՍ»Ի ԵԼՈՅԹԸ	14
«The Land of Legends» «ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒ ԵՐԿԻՐԸ» ԲԻՆԱՄ ԱՖԻՖԻ	16
ԳԱՀԻՐԵԻ ՀԲԸՄ-Ը ԿԸ ՊԱՐԳԵԻՍՐԵ ԵԳԻՊՏԱԿԱՅ ՓԱՅԼՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ <i>ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>	18
ՎԱՉԳԵՆ ԷՔՍԵՐՃԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ <i>Սօսի Ներքտեան-Յակոբեան</i>	22
ԽԹՈՒՄԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԵԻ ՀՅԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ <i>Սօսի Ներքտեան-Յակոբեան</i>	23
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ	23
ԿԱՂԱՆԴԻ ՊԱՉԱՐ ՀՅԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ <i>Սօսի Ներքտեան-Յակոբեան</i>	24
ԿԱՂԱՆԴԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ	24
ԱՆԴԱՄԱԿԱՆ	

ԽՄԲԱԳԻՐ
Մարուշ Երամեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
Անայիս Ճիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ՁԵԽԱՐՈՐՈՒՄ
Շահե Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing Press

Գահիրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան
էւ Հայերը Արաբական
Մամուլին մէջ. 1876-1923»
կայքէջի նիւթերուն
www.arminmedia.com
հասցեով:

Թիւ 82 Նոր Շրջան
ՅՈՒՆԻՒՄ 2017



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Մեր մանկության ստրված էինք որ Կաղանդը բարության ժամանակը ըլլալու կողքին, է նաեւ հաշուեյարդարի ժամանակը: Պահ մը դադրիլ, ամփոփուիլ եւ վերատեսութեան ենթարկել անցնող տարուան ընթացքին մեր ըրածն ու չըրածը, նոր ծրագիրներ կազմել, կամ նոր մարտահրաւերներ սահմանել մենք մեզի համար:

Հաւաքական առումով եւս նման հաշուեյարդար կրնայ ոչ միայն օգտակար ըլլալ, այլ եւ կրնայ անելի յստակ դարձնել գալիքի մեր ուղին:

2016-ի աւարտին հետ ԶԲԸՄ-ի հիմնադրութեան 110-ամեակի յոբելեական տարին իր աւարտը կը գտնէ: Գլխաւոր հանդիսութեան, որ տեղի ունեցած էր Նիւ Եորքի մէջ, Միութեանս նախագահ Պր. Պերճ Սեդրակեան ըսած էր թէ Միութիւնը մեծ եռանդով եւ նոր ծրագրերով կը սկսի աշխատանքային գալիք շրջանը:

Հաճելի է տեսնել որ ԶԲԸՄիութեան մեծ ընտանիքին պատասխանատուները կը գիտակցին երիտասարդութեան դերին, եւ անոր համեմատ յառաջ կը տանին իրենց «երիտասարդական» ծրագիրները:

Սպասելի է որ մօտիկ ապագայի իրենց աշխատանքը նոյն ոգիով ծրագրեն նաեւ Սփիւռքի մնացեալ գաղութները, լայն տեղ տալով երիտասարդներուն, պատրաստելու համար պետք եղած մարդուժը, որուն կարիքը այսօր խիստ զգալի է, միջազգային դէպքերէն ծնած մարդկային անկանխատեսելի տեղաշարժերուն մէջ:

Իրապէս, Միջին Արեւելքը, որ Սփիւռքի կազմաւորումէն ի վեր, գրեթէ ամբողջ դար մը եղած էր հայ ոգիի դարբնոցն ու հայապահպանումի աշխատանքին զինուորագրողներու պատրաստութեան «բանակավայրը», այսօր մտահոգիչ չափերով նօսրացումի մէջ է: Թերեւս բառը ծանր հնչէ, բայց հսկայական ճիգ պետք է դնել այստեղ. ապա թէ ոչ՝ ուրկէ՞ պիտի գան մեր դասատուները, խմբագիրներն ու մանաւանդ գրիչ շարժողները, ըլլան անոնք ստեղծագործողներ թէ յօդուածագիրներ: Թող չըսուի մեզի թէ դարը արագութեան, համակարգիչներու եւ համացանցի դար է: Արագութեան թէ համացանցի բաւիղներուն մէջ լեզուն նոյնն է, թէեւ հոս է աղաւաղումի, հետեւաբար կորուստի որոգայթը:

Միակ մխիթարանքը - որ շա՛տ հեռու է մխիթարանք ըլլալէ - այն է որ մնացեալ լեզուներն ալ նոյն նահանջին ենթարկուած են վերջին տարիներուն. ո՛չ արաբը լաւ արաբերէն գիտէ, ո՛չ ամերիկացին՝ լաւ անգլերէն: Մխիթարանք, թերեւս, բայց ոչ արդարացում:

Ի՞նչ ընել ուրեմն:

Թիավարել հոսանքն ի վեր:

Նորութի՞ւն է ասիկա մեզի, հայերուս համար: Մի՛շտ ալ պարագաներն ու պայմանները ձեռնտու եղած չեն մեր ազգին: Բայց գոյատեւած ենք շնորհիւ մեր «խենթ»երուն, որոնց համար գերագոյնը եղած է եւ կը շարունակէ ըլլալ «հայ»ութիւնը:

Անո՞նք է որ կը շարունակեն ջահը վառ պահել:

Այսքանին հաւատքով, ոգեշնչուած ծրագրողներով եւ աշխատողներով նոր տասնամեակ մը կը թեւակոխենք:

Անսպառ եռանդ, արդիւնաւետ աշխատանք եւ բարի ու խաղաղ տարի բոլորիս:

Մարուշ Երամեան



ՀԱՐՄ-Ի ՆԱԽԱԳ-ԱՀ ՊԵՐՃ ՍԵՂ-ՐԱԿԵԱՆԻ ԽՕՍ-ՔՐ

Հ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Յարգելի Անդամներ,
Միութենական Սիրելի Անդամ Անդամուհիներ եւ Բարեկամներ,

Մեծ ուրախութեամբ կ'ողջունենք բոլորդ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 110-րդ տարեդարձի տօնակատարութեան առիթով: Աշխարհի տարածքին մեր բոլոր շրջանակներուն կողմէ մեծ շուքով կատարուած ձեռնարկներու շարքին, Միութեան ծննդավայր Եգիպտոսի մէջ այս տօնախմբումը անկասկած յատուկ փայլ եւ նշանակութիւն ունի մեր բոլորին համար:

Հանգրուանային այս տարեդարձը, մեր Միութեան համար կը յատկանշուի նոր ժամանակներու եւ զարգացումներու արդիւնք եղող բազմաթիւ մարտահրաւերներով, որոնք համաշխարհային տարողութիւն ունին եւ որոնցմէ անմասն չի կրնար մնալ մեր ազգը:

Եգիպտոսի մեր շրջանակը, անցնող տարիներուն, ապրեցաւ արաբական աշխարհը ալեկոծող քաղաքական ծանր իրադարձութիւններն ու վերիվայրումները, միշտ մնալով իր յատկանշական դերի բարձրութեան վրայ, յատկապէս իրազեկման սատարող հրապարակագրական եւ հրատարակչական աշխոյժ նախաձեռնութիւններով, եւ ընկերային, երիտասարդական եւ մշակութային աշխոյժ գործունեութեամբ, որոնք օգնեցին լայն շրջանակներու մէջ հայ ժողովուրդի եւ Հայաստանի նկատմամբ դրական տրամադրութիւններու ստեղծումին եւ գործակցական յարաբերութիւններու մշակումին:

Մենք բարձր կը գնահատենք Եգիպտոսի Շրջանակին միութենանուէր գործունեութիւնը, որ կը բխի հայ ժողովուրդի եւ հայրենիքի բարօրութեան մտահոգութիւններէն: Այդ ուղղութեամբ, անցնող ամսուան ընթացքին, Նիւ Եորքի մէջ կայացած 89-րդ Ընդհանուր ժողովը շեշտեց, այսօրուան իրականութիւններու լոյսին տակ, մեր ազգին առջեւ ներկայացող աննախընթաց առիթներուն եւ անոր դիմագրաւած լուրջ մարտահրաւերներուն ընդառաջ, պատասխանատուութիւն ստանձնելու եւ այդ նոյն ընդհանրական ոգիով գործելու հրամայականները:

Մեր նոր հեռանկարն է տեսնել մեր հայրենիքը քաղաքական, տնտեսական եւ ընկերային այնպիսի կառոյցներով, որոնցմով կրնանք հպարտ զգալ բոլորս: Մենք պետք է ձգտինք հասնելու այդ տեսլականին եւ օգնենք հայրենիքին, իրականացնելու համար այդ երազը:

Հետեւաբար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հետագայ գործունեութիւնը պիտի զարգանայ հայրենիք, սփիւռք եւ հայ եկեղեցի մէկ ազգ հասկացողութեամբ:

Մեզմէ իւրաքանչիւրը պետք է ձգտի ըլլալ Ընդհանրական Հայ, ըմբռնելով, գնահատելով եւ յարգելով այն չափազանց կարեւոր դիրքը, զոր որպէս ազգ, մենք կը վայելենք այսօր: Այս գիտակցութեամբ է որ մենք կը վերահաստատենք մեր յանձնառութիւնը, հաւատարիմ Միութեան տեսլականին եւ առաքելութեան, գործելու համախումբ, նախապատուութիւն տալով Հայաստանի ընկերային-տնտեսական զարգացման, միաժամանակ շարունակելով եւ ամրապնդելով ազգային ինքնութեան պահպանումին սատարող Հ.Բ.Ը.Մ.ի մշակութային եւ կրթական արդիւնաւոր նախաձեռնութիւնները սփիւռքի մէջ:

Այս առթիւ ջերմօրէն կը շնորհաւորենք Եգիպտոսի մեր շրջանակը, Միութեան 110-րդ տարեդարձին առիթով, մաղթելով յարատեւ եռանդ եւ արդիւնաւոր գործունեութիւն, ի խնդիր հայ ազգի բարգաւաճումին:

Յաջողութեան մաղթանքներով՝
Պերճ Սեղրակեան

ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Յոթելենական որեւէ հանդիսութիւն նախ հպարտութեան զգացումով կը լեցնէ բոլորը՝ անոր մասին լսողներն ու մասնակիցները հաւասարապէս, որովհետեւ կը հաստատէ յարատեւութիւնն ու կամքը յորելենարին՝ հանրաժանօթ միութիւն թէ անհատ ըլլայ ան:

ՀԲԸՄիութեան 110 ամեակը ո՛չ միայն հպարտութիւն, այլ նաեւ յոյս կը ներշնչէ մեր՝ հայերուն ապագային նկատմամբ, որովհետեւ արդէն աւելի քան յստակ է սպիտակ ջարդին գործած աւերը մեր վրայ:

Բայց եթէ ֆիզիքական անեացումը կրցանք շրջանցել, շնորհիւ այնքան հեռատես մարդոց, որոնք իրենց ամբողջ կարելիութիւնը ի գործ դրած էին ազգին փրկութեան, ուրեմն այսօր եւս պիտի կարենանք դուրս գալ մեզի սպառնացող նոր անեացումի մը վտանգէն:

Նման յոյսի հաւաստիք է ՀԲԸՄիութեան հարիւր տասնամեակը, որ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ մեծ եռանդով տօնուեցաւ այս տարուան ընթացքին:

Եգիպտահայութիւնն ալ իր լուման բերաւ այս տօնակատարութիւններուն, 11 Դեկտեմբեր



2016-ի Երեկոյեան, Հելիոպոլսոյ Գրադարանի գեղեցիկ սրահէն ներս, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ Եպս. Մաացականեանի եւ Աղեքսանդրիոյ Կաթողիկէ Հայոց Թեմի Առաջնորդ Գերապայծառ Օգոստինոս Եպս. Գուսանի: Երեկոյին պատուոյ հիւրն էր ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեան:

Անշուշտ ներկայ էր եգիպտահայութեան աւագանին՝ Գահիրէի Թեմական եւ Զաղաքական Ժողովներու ատենապետները, միութիւններու եւ կազմակերպութիւններու ղեկավարներն ու պատասխանատուները եւ կոկիկ հասարակութիւն մը:

Օրուան հանդիսավարուին՝ տիկին Լալա Նիկոլեան նախ ներկաներէն խնդրեց մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգել նոյն օրուան առաւօտուն, Ղպտի եկեղեցւոյ պայթումին հետեւանքով զոհուածներուն յիշատակը:

Ապա բեմ հրաւիրեց ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի Ատենապետ տոքթ. Վիգէն Ճիգմեճեան, կատարելու հանդիսութեան





բացումը:

Տոքթ. Վ. Ճիգմեճեան իր բացման խօսքին մէջ մանրամասնօրէն ներկայացուց Միութեան գործունէութիւնը, նշելով անոր հանգրուանները եւ անդրադառնալով Գահիրէի մասնաճիւղին աշխատանքներուն:

Տիար Օսնիկ Պըլըքտանեան, ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետը, ընթերցեց ԶԲԸՄիութեան նախագահ տիար Պերճ Սեդրակեանի ողջոյնի խօսքը, ուղղուած Միութեան Եգիպտոսի շրջանակին:

Իրապէս հետաքրքրական էր 110-ամեակին առիթով Հայաստան պատրաստուած ժապաւենը, որ ցուցադրուեցաւ եւ քսան վայրկեաններու մէջ ներկայացուց այս մեծ միութեան անցած ճանապարհը, իրագործումներն ու այսօրուան նուաճումները՝ մասնագիտական մօտեցում Հայատանի թէ Սփիւռքի հարցերու դիմագրաւումին համար:

Հանդիսութեան ընթացքին վկայականներ յանձնուեցան միութեան վեթե-

րաններուն, իրենց քսանամեայ անդամակցութիւնը գնահատող:

Գեղարուեստական յայտագիրը կը կազմէր հանդիսութեան երկրորդ բաժինը: ԶԲԸՄ-ի «Ծիածան» մանկական երգչախումբը, իր երգով ու պարով ուրախացուց ներկաները (խմբավար՝ Գոհար Ղազէլեան, պարուսոյց՝ Սիւզան Գարգուր):

Այս առիթը օգտագործելով ՀՀ մեծարգոյ դեսպանը Միհրան եւ Գոհար Ղազէլեաններուն յանձնեց անոնց նուաճած մետալն ու վկայականը, «Հայապահպանման գործում նշանակալի աւանդի համար» «լաւագոյն գեղարուեստական խումբ»ի երրորդ դիրքը հաստատող:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Գահիրէի Օփերայի նուագախումբին անդամներէն կազմուած լարային քառեակի կատարումներով՝ Մոցարթի «Փոքրիկ Գիշերային Երաժշտութիւն»ով եւ Կոմիտասէն երեք մանրանուագներով:

«Տ»





ՀԱՐՄ-Ի ԳԱՀԻՐԷԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՏՈՒՔԹ. ՎԻԳԷՆ ՃԻՋՄԷՃԵԱՆԻ ԽՕՍՒՔԸ

Գերաշնորհ Սրբազան Հայր,
Արհիպապատիւ Գերապայծառ,
Նորին Գերազանցութիւն Յ.Բ. Արտա-
կարգ եւ Լիազօր Դեսպան,

Հոգեշնորհ եւ Արժանապատիւ հայրեր,
Մեծայարգ ատենապետներ Գահիրէի
Թեմական եւ Քաղաքական Ժողովներու եւ
ազնուափայլ տիկիններ,

Մշակութային, Մարզական եւ Բարեսի-
րական Միութիւններու ներկայացուցիչներ
եւ սիրելի ներկաներ,

110 տարիներ անցած են Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմ-
նադրութենէն ի վեր, որ տեղի ունեցած է
այստեղ՝ Նեղոսի ափերուն, շնորհիւ բարձ-
րագոյն կրթութեան տէր եգիպտահայ անձ-
նաւորութիւններու, պետական պատաս-
խանատու պաշտօններ վարող հայերու եւ
արժանաւոր ազգայիններու: Կազմակեր-
պութիւն մը, որ ծառայած է հայութեան աւ-
ելի քան մէկ դար, իրագործելով բազմաթիւ
կրթական, մշակութային եւ մարդասիրա-
կան ծրագրեր, հաստատելով հիմնարկներ,
որոնց միջոցով ընդառաջած է հայ հաւա-
քականութիւններու կարիքներուն եւ ձգ-
տումներուն, սփիւռքի եւ հայրենիքի մէջ:
Բարեգործականը՝ իր հիմնադրութեան
առաջին օրէն իսկ, յաջողած է պահել իր
կենսունակութիւնը եւ գործած է «Մէկ Ազգ
Մէկ Ժողովուրդ» հասկացողութեամբ եւ
նշանաբանով: Շնորհիւ իր իմաստուն հիմ-
նադիրներու որդեգրած սկզբունքներուն եւ
նպատակներուն, ինչպէս նաեւ անոնց յա-
ջորդած ողջամիտ ղեկավարներուն, որոնք
տասնամեակներու ընթացքին գիտակից եւ
նուիրեալ գործունէութեամբ պահպանած
եւ զարգացուցած են զանոնք, շնորհիւ իր
սիրայօժար ծառայողներուն, նուիրատու-
ներուն եւ բարերարներուն, Հ.Բ.Ը.Մ.ը կա-
րողացաւ դառնալ այսօր համաշխարհային
հզօր կազմակերպութիւն մը, իրագործելով
այնպիսի ծրագիրներ, որոնք խոր ազդեցու-
թիւն կ'ունենան հայ ժողովուրդի ընկերա-
յին եւ տնտեսական կեանքին մէջ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր
Միութեան հիմնադրութեան 110-րդ տարե-

դարձը կը դիմաւորենք հպարտութեամբ եւ
նոր մարտահրաւերներու դիմաց ծանր պա-
տասխանատուութեան գիտակցութեամբ:
ՀԲԸՄ-ը, ինչպէս իր հիմնադրութեան առա-
ջին դժուար օրերուն, երբ Մեծ Եղեռնի
պատճառով գոյացած դժուարութիւնները
դիմագրաւեց, վերջին շրջանին եւս ունի
բազմաթիւ մտահոգութիւններ՝ ինչպէս Մի-
ջին Արեւելքի եւ մանաւանդ Սուրիոյ եւ
Իրաքի մէջ գոյութիւն ունեցող անկայունու-
թիւնը, եւ Լեռնային Ղարաբաղի հանդէպ
Ատրպէյճանի աճող թշնամանքը: Մեծ ճի-
գեր կը թափուին ՀԲԸՄ-ի կողմէ մարդասի-
րական օգնութիւն հասցնելու եւ այդ շրջա-
նի հայերուն նեցուկ կանգնելու համար:
ՀԲԸՄ-ի մեծագոյն մարտահրաւերներէն
մէկն է նաեւ իր միջոցներուն հաւասարակշ-
ռուած բաշխումը Հայաստանի, Արցախի եւ
Սփիւռքի միջեւ, ինչպէս եւ մարդկային եւ
նիւթական նոր միջոցներու ապահովումը,
իր ծրագրերու իրագործման համար:
Նշենք թէ ՀԲԸՄ-ը իր կատարած մարդասի-
րական բազմաթիւ ծրագիրներով կը
նպաստէ աւելի քան կէս միլիոն հայերու,
աշխարհի ամբողջ տարածքին: Հայկական
Բարեգործական Ընդհանուր Միութիւնը,
հայաշխարհի մեծագոյն ոչ-հասութաբեր
կազմակերպութիւններէն մէկն է: 26 երկիր-
ներու մէջ ունի 74 գործող մասնաճիւղեր,
որոնցմէ մին է ՀԲԸՄ-ի Գահիրէի մասնա-
ճիւղը, որ, ինչպէս ՀԲԸՄ-ի բոլոր մասնա-
ճիւղերը, նուիրուած է հայկական աւանդու-
թիւններու պահպանման եւ տարածման,
դաստիարակչական, մշակութային եւ մար-
դասիրական ծրագրերու միջոցով: Եգիպ-
տոսի մէջ, Բարեգործականը յաջողեցաւ
պահել իր կենսունակութիւնը եւ շարունա-
կեց բարգաւաճիլ, շնորհիւ բոլոր ժամա-
նակներու իր ողջամիտ ղեկավարներուն
անխախտելի նուիրումին, որոնք հաւատա-
րիմ մնացին Միութեան սկզբունքներուն եւ
ունեցան աշխոյժ գործունէութիւն, համա-
ձայն իրենց ունեցած միջոցներուն եւ դրա-
մագլուխին: Կրնանք հաստատել թէ այսօր
Գահիրէի Բարեգործականը կը կանգնի իբ-
րեւ կայտառ, զօրաւոր եւ գործունէայ կազ-



մակերպություն մը Սփիւռքի մէջ, յատկապէս եգիպտահայ գաղութէն ներս: Ինչպէս ԶԲԸՄ-ի զանազան մասնաճիւղերը, Գահիրէի ԶԲԸՄ-ը եւս ունի բազմաթիւ մարտահրաւերներ եւ մտահոգութիւններ: Որպէս Սփիւռքի յառաջապահ եւ անցեալին մեծաթիւ գաղութ, ստիպուած ենք ընդունիլ, որ թէեւ դանդաղ, բայց հաստատօրէն կը դիմենք դէպի նուազում: Կարիքը կը զգանք նոր ձեւեր որդեգրելու, այս նուազումը կասեցնելու համար, աւելին՝ կարենալ ստեղծելու մշակութային եւ մարդասիրական այնպիսի մթնոլորտ, որ մղենք հայերը տեղական կարելիութիւններէն օգտուելու եւ իրենց ամբողջ ներուժը ի սպաս դնելու իմաստուն կերպով մշակուած ծրագիրներու իրագործումին: Այս առնչութեամբ Ազգային Առաջնորդարանին հետ կը գործակցինք համադրելու համար եգիպտահայոց բժշկական, թոշակային եւ ուսումնական կարիքներուն հոգածութիւնը: Մենք գիրար կ'ամբողջացնենք հասնելու համար ընկերային, ուսումնական եւ բժշկական լաւագոյն միջոցներու հայթայթման: Ընկերային օժանդակութեան ծիրէն ներս, դարմանի եւ ապրուստի յատկացումներ կ'ընենք կարիքաւոր եգիպտահայերու: Նաեւ Չագըր Զիմ-Նադրամի առողջապահական հոգատարութեան ծրագրէն՝ Medicaire-էն կ'օգտուին գաղութի զաւակներէն հարիւրաւորներ: Բազմաթիւ կարիքաւորներ կը ստանան նաեւ ապրուստի ամսական յատկացումներ: Կարիքաւոր եգիպտահայոց օգնելը մեր գլխաւոր առաջնահերթութիւններէն մէկն է: Ասոր կողքին մեր Միութիւնը խորապէս կը գիտակցի նաեւ մշակութային եւ ուսումնական ծրագրերու կարեւորութեան:

Յաջորդ գերխնդիրը հայկական ինքնութեան պահպանումն է՝ լեզուի եւ մշակութային ժառանգութեան, որոնք Սփիւռքի բոլոր համայնքներուն համար ալ հարց դարձած են, հարց, որ կրնայ նուազ տարողութիւն ունենալ Արեւմուտքի համայնքներուն մէջ, բայց մեզի, եգիպտահայերու համար մտահոգիչ երեւոյթ է: Մեր բոլոր միութիւններու ճիգերուն միաձուլումով է միայն, որ կրնանք հայկական ինքնութիւնը եւ ժառանգութիւնը պահպանել: Գահիրէի ԶԲԸՄ-ը կը հաւատայ թէ կարեւոր դեր ունի կա-

տարելիք այստեղ, մշակութային եւ դաստիարակչական տեսանկիւնէն եւ առ այդ ձեռնարկներ կը կազմակերպէ՝ հերթական հանդիպումներ, հաւաքոյթներ եւ հանդիսութիւններ, ինչպէս «Ծիածան» մանկական երգչախումբը եւ հայերէն լեզուի ու ճատրակի դասընթացքները: Եգիպտահայութեան մեծագոյն մարտահրաւերը իր գոյութեան պահպանումն է: Զակառակ այս երեւոյթին, մենք որոշած ենք շարունակել մշակութային եւ դաստիարակչական առիթներ ստեղծել, որովհետեւ համոզուած ենք թէ որպէս միութիւն, մենք պարտականութիւն մը եւ ժառանգուած առաքելութիւն մը ունինք կատարելիք: Յարատեւութեամբ է միայն որ կարելի է նպատակներու հասնիլ: Մշակութային եւ դաստիարակչական ձեռնարկներէ ձեռք քաշելը, կրնայ մեզ մեր ժառանգութեան հանդէպ հետաքրքրութեան շիջումի տանիլ: Նման բան թոյլատրելի չէ: Դասական միջոցները այլեւս բաւարար չեն, այլ եւ ժամանակավրէպ են եւ ապարդիւն: Օրինակ, հայկական ինքնութեան պահպանումին նպատակով, Գահիրէի ԶԲԸՄ-ը նոր մեթոտներու կը դիմէ հայերէն լեզուի, մշակոյթի եւ պատմութեան դասաւանդումին համար: AVC-ի՝ Արմինիան Վիրուալ Գոլէճի միջոցով, հայերէն լեզուն կը փորձենք տարածել եգիպտահայոց մէջ, թէ՛ նոր սորվողներուն եւ թէ՛ իրենց գիտցածը ամրապնդել փափաքողներուն համար: Անցեալ Փետրուարին, ԶԲԸՄ-ի Սաթենիկ Չագըր կեդրոնէն ներս սկսած ենք հայերէնի մէկ դասարանով դասընթացք մը, որ յաջորդ Սեպտեմբերին ունեցած է երկու դասարան, շաբաթը 3 անգամ 30 աշակերտներով, մեծամասնութիւնը՝ ոչ հայախօս: Այս դասընթացքները մեծ յաջողութիւն արձանագրած են լեզուն, մշակոյթն ու ազգային ինքնութիւնը տարածելու, դասաւանդման նոր ձեւերու շնորհիւ: Ասոնց զուգահեռ ունինք ճատրակի ակումբ մը, AVC-ի ճատրակի երկրորդ մակարդակի դասընթացքները աւարտողներուն, որոնց համար այս դաստիարակչական խաղը նաեւ համախմբուելու առիթ է:

ԶԲԸՄ Գահիրէի մարդասիրական, դաստիարակչական եւ մշակութային լայնածաւալ գործունեութենէն անդին, մենք կա-



րեւորութիւն կու տանք նաեւ հրատարակ-
չական աշխատանքին, տպագիր թէ համա-
ցանցային տարբերակներով: Այստեղ կը
նանք յիշել թէ Գահիրէի ԶԲԸՄ-ի Սաթենիկ
Չագըր Զիմնադրամի միջոցներով մինչեւ
այսօր հրատարակուած են 84 գիրքեր եւ
գրքոյկներ, որոնցմէ 64-ը հայերէն լեզուով
են, իսկ մնացեալները՝ հայկական նիւթեր
շօշափող այլ լեզուներով գիրքեր (արաբե-
րէն եւ անգլերէն): Այս ծիրին մէջ լոյս տե-
սած վերջին հրատարակութիւնն է ֆրան-
սահայ ծանօթ պատմաբան Րէյմոն Գեորգե-
անի «Le Genocide Armenien» հատորին
արաբերէն թարգմանութիւնը: Զրատարակ-
չական մարզին մէջ ունինք ԶԲԸՄ Գահիրէի
«Տեղեկատու» եռամսեան եւ արաբերէն
«Արեգ» ամսագիրը: Ունինք նաեւ երկու
կայքէջեր՝ agbuegypt.com եւ armin-media.com, երկրորդը՝ յատուկ կայքէջ մը,
տրամադրուած արաբերէն մամուլի այն յօ-
դուածներուն, որոնք անդրադարձած են
հայոց Ջարդերուն, 1876-էն մինչեւ 1923
թուականները:

Մանրաժապավէնի վրայ նկարահանու-
ած են եգիպտահայ երեք թերթերով՝
«Արեւ»ի, «Յուսաբեր»ի եւ «Ջահակիր»ի
(նոր շրջան) հաւաքածոները, իրենց հիմ-
նադրութենէն մինչեւ 2000 թուականը: Գա-
հիրէի ԶԲԸՄ-ը կը հովանաւորէ հայ կամ
եգիպտացի համալսարանաւարտ այն ու-
սանողները, որոնք իրենց բարձրագոյն ու-
սումը աւարտելէ յետոյ, հայկական նիւթ մը
կ'ընտրեն իրենց մագիստրական կամ դոկ-
տորական թեզերը պաշտպանելու համար:
Այս ծիրէն ներս ունինք 6 ոչ-հայ ուսանողներ:

Կը քաջալերենք հայ մտաւորականներն
ու արուեստագէտները ստեղծագործելու,
անոնց կատարելով նիւթական օժանդա-
կութիւններ եւ ուսումնասիրական եւ ստեղ-
ծագործական պարապմունքի յատկացում-
ներ: Նիւթապէս կը սատարենք նաեւ այն
մասնագէտներուն կամ մարզիկներուն,
որոնք Զայաստան կ'ուղարկուին: Զայաս-
տանէն եւ Սփիւռքէն մենեղգողներ, դաշնա-
կահարներ, պարախումբեր եւ թատերա-
խումբեր, ինչպէս նաեւ պատմաբաններ,
դասախօսներ եւ արուեստագէտներ կը
հրաւիրենք:

Գալով մեր կապերուն ԶԶ դեսպանու-

թեան հետ - որ հաստատուած է ԶԲԸՄ Գա-
հիրէի Չագըր կալուածին վրայ (Չամալէք) -
մեր յարաբերութիւնները լաւագոյն մակար-
դակի վրայ են. կը գործակցինք տարբեր
մարզերու մէջ. ինչպէս Զայկական Ուսում-
նասիրութիւններու Կեդրոնի պարագային,
որ կապուած է Գահիրէի Զամալսարանին
եւ ուր հայերէն լեզուի դասընթացքներ եւ
զանազան դասախօսութիւններ ու համա-
գումարներ տեղի կ'ունենան, ԶԶ դեսպանա-
տան աջակցութեամբ:

Շատ կարելոր է աշխատանք տանիլ
երիտասարդ սերունդը ընկերային գործու-
նեութեան պատրաստելու համար: Իրենք
են ապագայի մեր ղեկավարները: Գահիրէի
ԶԲԸՄ-ը մեծ կարեւորութիւն կու տայ այս
հարցին. կարելի եղածին չափ կը փորձենք
մեր վարչամեքենային մէջ, երեցներուն կող-
քին, երկու սեռէ երիտասարդներ եւս նե-
րառնել: Այս ընտրութիւնը կը կատարուի
դանդաղ եւ հաւասարկշռուած կերպով: Մի-
ջին սերունդին դերը այս երկու խմբաւո-
րումներու աշխատանքն ու ծրագիրները
համակարգել է, քայլ պահելու համար մեր
նախորդներու սկզբունքներուն հետ եւ
հասնելու մեր Միութեան նպատակներուն
հետ: Այս բոլորը անշուշտ կը նպաստեն Մի-
ութեանս դրական եղափոխութեան եւ յա-
ռաջընթացին:

Այս օրերուս Միութեան կեդրոնը կ'աշ-
խատի երիտասարդներու կազմաւորման
նոր ձեւեր եւ միջոցներ որդեգրել: Ծրագիր-
ներ, ինչպիսիք են «Երիտասարդ Մասնա-
գէտներ», «Կորիզ Առաջնորդներ», «Ուսա-
նողական Փորձառութեան Ծրագիրներ»-
Internship programs, «Երաժշտական Զա-
յաստան», «Զայաստանի Յայտնաբերում-
Discover Armenia», «Ֆոքլո», «Յաջորդ Սե-
րունդ - Generation next» եւայլն, որոնք բո-
լորը նուիրուած են նոր սերունդի կազմա-
ւորման: Իրականացնելու համար այս լայ-
նածաւալ ծրագիրները, անհրաժեշտ է որ
Միութիւնը ապահովէ համապատասխան
մարդուժ, նիւթական կարելիութիւններ եւ
զօրաւոր ընկերակցութիւններ, որոնց միջո-
ցով է միայն որ պիտի կարենայ ապահովել
հայ ազգի կայուն ապագան:

Շնորհակալութիւն ձեր ուշադրութեան
համար:



Մարտի Ճառագայթ Մը՝ ԱՐԱՔՍԻ ՏԵՕՎԼԵԹԵԱՆ

Կան մարդիկ, որոնց կեանքը լուռ է ընդհանրապես՝ չեն խօսիր իրենց ըրածին մասին, չեն յայտարարեր թե որքան մեծ աշխատանք կը տանին, չեն յոխորտար...

Բայց երբ կը մահանան, կը զգաս իսկական լուռեան ծանրությունը, կը զգաս թե որքա՞ն մեծ տեղ լեցուցած էին անոնք կեանքիդ եւ գաղութի կեանքին մէջ, կը զգաս թե որքա՞ն քիչ բան ըրած ես գիրենց գնահատելու համար, բայց նաեւ կը զգաս որ ուշ է արդէն, շատ ուշ է, անոնք չկան եւ ճառագայթ մը պակսեր է օրերուդ վրայէն:

Նման մարդոցմէ մէկն էր Արաքը, տիկ. Արաքսի Ուստայեան-Տեովլեթեանը, որուն կեանքը համակ նուիրում եղած է իր ընտանիքին եւ եգիպտահայ գաղութի մեծ ընտանիքին:

Ծնած է Զալէպ եւ տեղւոյն Կիլիկեան Նախակրթարանը յաճախելէ յետոյ, իր ուսումը շարունակած՝ Զալէպի Aleppo College-ին մէջ:

Ապա ուսուցչական պաշտօնի կոչուած է ԶԲԸՄ-ի Լ. Նաճարեան-Գ. Կիւլպէնկեան Վարժարանէն ներս:

Կանուխէն մաս կազմած է Զալէպի ԶԲԸՄ-ՅԵԸ պասքէթպոլի աղջկանց խումբին եւ յետագային անդամ ընտրուած՝ նոյն Միութեան գործադիր մարմնին, յառաջ տանելով աշխոյժ գործունեութիւն:

1961-ին եգիպտոս գալով ամուսնացած է երիտասարդ հասարակական գործիչ Նորայր Տեովլեթեանի հետ, բախտաւորութեամբ երեք դուստրերով՝ Կասիա Ճղալեան, Մարալ Ոսկեան, Կարինէ Սիկալաս եւ հինգ թոռներով:

Եգիպտոսի մէջ շարունակելով իր գործունեութիւնը հետզհետէ մաս կազմած է ԶԳՄ-ի Տիկնանց Յանձնախումբին, Զայ Մշակոյթի Բարեկամներու Վարչութեան եւ

Գահիրէի Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին:

1968-էն սկսեալ ամբողջ երեք տասնա-



մեակ ստանձնած է պատասխանատուութիւնը Գահիրէի Պետական Ռատիոկայանի Զայկական Բաժնին:

Այս ուղղութեամբ ստացած է գնահատանքի պատուոյ գիրեր, եգիպտահայոց Նախորդ առաջնորդ հոգեւոյն Չաւէն Արք. Զինչինեանէ եւ Եգիպտոսի Մշակոյթի Նախարարութենէն:

Շրջան մը աշխատակցած է

«Արեւ» օրաթերթին:

Իսկ 2002-էն 2011, ամբողջ 10 տարի սիրայօժար կերպով վարած է խմբագրութիւնը այս հանդեսին՝ ԶԲԸՄ-ի եռամսեայ «Տեղեկատու» պարբերաթերթին:

Անդամակցած է Զայ Գեղարուեստասիրաց Միութեան, Զայ Ազգային Զիմնադրամին, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

Այս բոլորին կողքին սատարած է ԶԶ Դեսպանութեան Տիկնանց Օժանդակ

Յանձնախումբին գործունեութեան, ինչպէս նաեւ ազգային տօներու առիթով կազմակերպուած համագաղութային ձեռնարկներու գեղարուեստական բաժնի պատրաստութեան:

Տիկ. Տեովլեթեանի ամուսինը՝ ողբացեալ Նորայր Տեովլեթեանը եգիպտահայ գաղութին ծանօթ դէմքերէն մէկը եղած է իր ամբողջ կեանքի ընթացքին, նուիրուած հայրենիքին եւ իր դաւանած կուսակցութեան, որոնցմէ վեր ոչինչ կայ:

Բայց տղամարդ մը, առանց կնոջ զօրավիգին, չի կրնար ընել այնքան, որքան երբ նուիրուած, հասկցող, գործունեայ կին մը ըլլայ իր ետին կեցած: Անոնք մեր, սփիւռքահայերու գաղութային կեանքին անգիր օրէնքներն են, որոնց մասին հազիւ թե խօսուի: Սփիւռքահայ նուիրուած մարդիկն էին որ գաղութները ոտքի պահեցին, դարձուցին բարգաւաճ, ինքնաբաւ, նոյնիսկ Զայաստանի օգնութեան փութացող: Եւ այդ նուիրուած մարդոց ետին կեցող կի-



ՓԱՐԻԶԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԻ ՀԱՒԱՔԱԾՈՆ ԹՈՒԱՅՆԱՑՈՒԱԾ

ՀԲԸՄ-ի Նուպարեան Մատենադարանը (Փարիզ) վերջերս յայտարարած է իր հաւաքածոյին թուայնացումը. ասիկա առիթ կ'ընծայէ հետաքրքրուողներուն ծանօթանալու անոր արխիւներու եւ լուսանկարներու ճոխ հաւաքածոյին, որ կը բեւեռուի Օսմանեան կայսրութեան եւ Սփիւռքի մէջ ապրող հայութեան շուրջ, կը սեւեռէ տասնիններորդ եւ քսաներորդ դարերը եւ կարելոր աղբիւր մըն է հայ մշակոյթին եւ ժամանակակից պատմութեան համար:

Նուպարեանի կայքէջը - որ միշտ պիտի թարմացուի - արդէն կը պարփակէ լուսանկարներու կարելոր հաւաքածոյ մը, մասեր Անտոնեանի, Պոլսոյ Պատրիարքարանի, Հայկական Պատուիրակութեան եւ ՀԲԸՄ-ի արխիւներէն, թուայնացած օրինակներ Պոլսոյ ֆրանսերէն «Չարթօնք» թերթէն, լոյս տեսած 1918-1920 թուականներուն, Փարիզի 2015-ի ցուցահանդէսին տեսերիզը, եւ մատենադարանի երկու թերթերուն՝ «Revue d'histoire

armenienne contemporaine»ի եւ «etudes armeniennes contemporaines»ի հաւաքածոները:

Նուպարեան Մատենադարանը, որ հիմնուած է 1928 թուականին ՀԲԸՄ-ի հիմնադիր Պօղոս Նուպարի կողմէ, կը պարփակէ 500.000 արխիւային նիւթ, 1500 հանդէս եւ 10.000 լուսանկար, ինչպէս եւ մեծ թիւ մը տակաւին չիրատարակուած նիւթերու:

«Յոյս ունիք որ թուայնացումի մեր ամիսներու աշխատանքը պիտի դիւրացնէ աշխարհի տարբեր անկիւններուն մէջ գտնուող գիտնականներու գործը: Մեր մատենադարանը իրապէս հարուստ է: Կ'աշխատինք այդ հարստութիւնը մատչելի դարձնել հետաքրքրուողներուն համար» կ'ըսէ Նուպարեան Մատենադարանի այժմու տնօրէն Պօրիս Աճեմեան:

Անոնք որոնք հետաքրքրուած են Նուպարեան Մատենադարանի կայքէջով, կրնան հետեւեալ հասցեով «այցելութիւն» մը կատարել:

www.bnulibrary.org.

Ներն էին որ այդ բոլորը կարելի դարձուցին, որովհետեւ երբ այրը նուիրուած է գաղութին, ո՞վ պիտի լեցնէ անընդհատ ժողովներու մէջ ներկայ, բայց ընտանիքէն բացակայ հօր տեղը, ո՞վ պիտի զբաղի զաւակներու դաստիարակութեամբ, եթէ ոչ կինը:

Նման կին էր Արաքսի Տեօվլեթեանը:

Զսանի տարեկան երիտասարդի եռանդ եւ հոգի ուներ, քսանհինգի երգիծանք եւ ութունի հոգիի մեծութիւն, որ քիչերուն տրուած է:

Հիմա որ հեռացած է մեզմէ, կը յիշենք իր հասարակական գործունեութիւնը, բայց շատ անելի կը ցաւինք կորուստին համար մէկու մը, որուն համար գլխագիր Մարդ կ'ըսեն, եւ ամէն օր կը փնտռենք իր երգիծանքը, եռանդը եւ այնքա՛ն մեծ հոգին:

Խաղաղութիւն իր յոգնած մարմնին եւ համբերութիւն՝ մեզի:

Մ. Երամեան



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Կենսագրական Գիծեր

Ծնած է Գահիրե, 1950-ին: Նախակրթությունը ստացած է Վիեննական Մխիթարեան հայրերու Գահիրեի, ապա Զելիոպոլսոյ Նորակառոյց վարժարանէն ներս: Երբ աշակերտութեան թիւը անյուսօրէն նուազած է, Մխիթարեան հայրերը վարժարանը վարձու տուած են իրլանտացի վարդապետներու Սէն Ճորճ վարժարանին:

Սէն Ճորճէն երկրորդականի շրջանաւարտ, համալսարանական ուսումը շարունակած է Գահիրեի Ամերիկեան Զամալսարանէն ներս, ուր Նախ տարի մը ուսանած է քիմիագիտութիւն եւ բնագիտութիւն (Ֆիզիքս), ապա՝ մարդաբանութիւն եւ հոգեբանութիւն:

Զամալսարանի տարիներուն, իրիկունները աշխատած է արուեստագետ լուսանկարչուհի Տիկ. Շաքէ Ալպանի *սթիւտիոյին* մէջ: Ուսումը աւարտելէ ետք, Նոյն տեղը շարունակած է աշխատիլ, յուսալով արուեստի մթնոլորտի մէջ մնալ: Սակայն գործին միօրինակութենէն խրտչած, ձգած է աշխատանքը:

Գծագրութեան անձնական դասերու հետեւած է Նախ Նորա Իփէքեանի, ապա Աշոտ Չօրեանի եւ Բիւզանդ Կոճամանեանի մօտ (վերջինը եղած է Մխիթարեան վարժարանի գծագրութեան ուսուցիչը): Սակայն պայմաններու բերումով չէ շարունակած գեղանկարչութիւնը:

Նորածնութեան վեցամսեայ դասընթացքի մը հետեւած է Փարիզ, սակայն Գահիրե վերադարձին, երբ տեսած է թէ դժուար պիտի ըլլայ այդ աշխատանքը, սկսած է հօր գրախանութիւն մէջ աշխատիլ: Այսօր կը շարունակէ Նոյն խանութիւն մէջ աշխատիլ, իր երեք եղբայրներուն կողքին, բայց գրախանութիւնը արդէն դիմագիծ փոխած է եւ դարձած Գահիրեի մէջ վարկ եւ համարում ունեցող արուեստի վաճառատուն մը:

Զայրը՝ Ճորճ Միքայէլեան, եղած է ԶԲԸՄ-ի հաւատաւոր անդամ եւ Գահիրեի մասնաճիւղի ատենապետ: Անոր մահէն ետք՝ երիտասարդ Զրիստափօրը ինք կը դառնայ անդամ 1985-ին, իսկ 1986-ին վարչական անդամ եւ մինչեւ օրս կը շարունակէ մնալ Միութեան գործունեայ վարչական անդամներէն մէկը:

Գնահատելով իր աւելի քան երեսուն տարիներու աշխատանքը, «Տեղեկատու»ն հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ անոր հետ:

Չրուցող - Ձեր անունը բաւական «ծանրակշիռ» անուն է, գիտէ՞ք: Ի՞նչ կ'ըսեք այդ առնչութեամբ:

Ք. Մ. - Զայրս համակիր եղած է ԶՅԴ-ի եւ մեր մականունէն ներշնչուած, միշտ ուզած է զաւակը Զրիստափօր անուանել. քոչս անունը Ռուբինա է, փոքր եղբօրս անունը՝ Րաֆֆի: Թէեւ զոյգ անուն ունիմ՝ Վիգէն-Զրիստափօր, բայց ես իմ երկրորդ անունովս՝ Զրիս ճանչցուած եմ:

Չրուցող - Կը հասկնամ որ ձեր միութենական աշխատանքը չի սահմանափակուիր

մէկ միութեամբ: Ինչպէ՞ս կ'որոշեք թէ ո՛ր ի՞նչ աշխատանք պիտի տանիք:

Ք. Մ. - Զայրիկիս որդեգրած ոճին կը հետեւիմ. բոլոր կողմերէն՝ Գեղարուեստասիրաց, ԶԲԸՄ եւ միւսները կու գային իրեն, ու եթէ կրնար, անպայման կ'օգնէր: Այս տեսակետով հայրիկս բոլորին ծանօթ էր, բայց ո՛չ մէկուն կը պատկանէր: Չեմ սիրեր «չեզոք» բառը ըսել, որովհետեւ կեցուածք ստեղծող բառ է:

Չրուցող - «Չեզոք» կը նշանակէ ո՛չ մէկուն հակող կամ օգնող, մինչ դուք, ճիշդ հակառա-



կը, բոլորին ալ կ'օգնէք, երբ պետք ըլլայ:

Զ. Մ. - Հայրիկս ՀԲԸՄ-ի անդամ եղած է վաղուց: Իր մահանալէն ետք ես անդամ դարձայ, կարծես ձեռով մը որպէս ներկայացուցիչ կաթողիկէ համայնքին:

Չրուցող - Ինչպէ՞ս կ'որոշէք ձեր ընելիքը միութիւններէն ներս. առաջա՞րկ կը ստանաք. եւ ընդհանրապէս ի՞նչ տեսակի աշխատանք կը տանիք:

Զ. Մ. - Միութիւններէն ներս ծանօթ ենք որ արուեստի կապուած աշխատանքներ կ'ընենք. օրինակ երբ ցուցահանդէս մը պետք ըլլայ պատրաստել, անոր կազմակերպումին համար կ'աշխատիմ. նաեւ՝ պարահանդէսներու, որովհետեւ կրնանք մթնոլորտ եւ խանդավառութիւն ստեղծել: Օրինակ շրջան մը Գեղարուեստասիրացը գծագրութեան մրցումներ կը կազմակերպէր. աշխատած եմ այդտեղ: Կամ մասնակցած եմ Ժիրայր Փափազեանի թատերախումբին: Իր հիմնադրութեան օրէն անդամ եղած եմ Սարտարապատ պարախումբին:

Չրուցող - Կաթողիկէ համայնքին մէջ եւս նոյնքան եւ նոյնանման գործունեութիւն ունիք:

Զ. Մ. - Այո՛. սկիզբը կաթողիկէ համայնքը ակումբ չունէր. հայրս ՍԷՆ Թերեզ ակումբը հիմնողներէն մէկը եղած է. մենք ալ հոն ժողովական եղած ենք եւ թատրոն, պարահանդէս եւ այլն կազմակերպած ենք: Դժբախտաբար համայնքին անդամները դադրած էին հայախօս ըլլալէ: Մենք եւ քանի մը հայախօս կաթողիկէ այլ ընտանիքներ ջանացած ենք հայ ոգին վառ պահել ոչ-հայախօսներուն մօտ: Բաւական յաջողեցանք մեր նպատակին մէջ: Հայրս հայ կաթողիկէ համայնքին Աղքատախնամին մէջ էր եւ պայման դրած էր որ կրթական օգնութիւն կրնան ստանալ միայն, երբ եկեղեցիները իրենց զաւակները հայկական դպրոց տանին: Այդպէս է որ կարգ մը արաբախօս ընտանիքներու զաւակները Գալուստեան կամ Նուպարեան յաճախած են եւ որոշ չափով հայերէն սորված: Այսօր սակայն Աղքատախնամը կրթական հարցերով չ'զբաղիր, որովհետեւ ՀԲԸՄ-ը յանձն առած է ատիկա:

Չրուցող - Հիմա հայ կաթողիկէ համայնքէն ներս շատցա՞ծ են հայախօս ընտանիքները, թէ ոչ:

Զ. Մ. - Դժբախտաբար ոչ. հազիւ մէկ-երկու ընտանիք են միայն որ կը շարունակեն հայա-

խօս մնալ, բայց բոլորն ալ հայ ոգին ունին, ձեռով մը զարթօնք կ'ապրին կարծէք. շատեր Հայաստան գացին այցելութեան, հակառակ որ հայերէն չեն գիտեր: Իսկ ՀԲԸՄ-ի կազմակերպած AVC-ի հայերէնի դասընթացներուն մասնակիցները գրեթէ բոլորն ալ հայ կաթողիկէներ են:

Չրուցող - Դուք ձեր երիտասարդութեան ապրած էք եգիպտահայ գաղութին փառքի օրերը՝ բազմաթիւ միութիւններու եռանդագին գործունեութեամբ. այսօր ինչպէ՞ս կը տեսնէք տարբերութիւնը:

Զ. Մ. - Տարբերութիւնը, դժբախտաբար յստակ է: Մենք սակայն, մեր երիտասարդութեան ակումբներէն զատ շատ տեղ չունէինք երթալու. յաճախ ակումբներն էինք, եւ կը տեսնէինք թէ ժողովները ինչպէս կ'ըլլան, ձեռնարկները ինչպէս կը կազմակերպուին եւ այլն: Ճիշդ է որ օտար ընկերներ ունէի, որովհետեւ ՍԷՆ Ճորճ կը յաճախէի, բայց սովորութիւն չունէինք մեր ընկերներուն տունները երթալու: Հայկական շրջանակին մէջ էինք միշտ: Բարեբախտութիւն էր որ դասարանին մէջ տասներկու հայեր էինք: Ակումբներուն մէջ ալ աւելի գործունեութիւն կար: Նոր սերունդի տղաքը սակայն պարզօրէն կ'երթան իրենց օտար ընկերներուն տունները, անոնք կու գան, շփումը աւելի է եւ բնական ձեռով կը դիտուի, ինչ որ մտերմութիւն կը ստեղծէ: Բայց ակումբներէն ներս կը շարունակուի գործունեութիւնը, կան խումբեր որոնք կ'աշխատին, ձեռնարկներ կը կազմակերպեն:

Չրուցող - ՀԲԸՄ-ի անդամ ըլլալէ անդին այլ միութիւններու եւս անդամ եք:

Զ. Մ. Կաթողիկէ Աղքատախնամին, ՀԲԸՄ-ին եւ նախապէս «Հայ Մշակոյթի Բարեկամներ»ուն, որուն հայրս ալ անդամ էր: Անոնց ժողովները հոս, հօրս գրախանութիւն մէջ տեղի կ'ունենային, Սարուխանը կու գար, Կայծ Կոկանեանը եւ ուրիշներ: Հայրս կարծես նման շրջանակի համար ստեղծուած էր. համբերատար էր մարդոց ըսելիքները լսելու: Իրմէ առած ըլլալու եմ ժողովականի շնորհս:

Չրուցող - Հետաքրքրական բան մը ըսիք՝ «ակումբ կ'երթայինք, կը տեսնէինք թէ ժողովները ինչպէ՞ս կ'ըլլան, ձեռնարկները ինչպէ՞ս կը կազմակերպուին» եւ այլն: Այլ խօսքով՝ երեցները անուղղակի ձեռով մարդուժ կը պատրաստէին՝ մարդիկ, որոնք գային գիրենք փոխարինել: Հիմա դուք արդէն երեց սերունդ եք. նման աշխատանք կը տանի՞ք երի-



տասարդներուն հետ: Մարդուժի պատրաստութիւն տեղի կ'ունենա՞յ արդեօք:

Բ. Մ. - Ես մէկ բանի կը հաւատամ. Նորա Իփէքեանէն սորված եմ որ պէտք է փոքրերը ազատ ձգել, որովհետեւ անոնք դիտելով ալ կը սորվին եւ երբ ատենը գայ, անոնք իրենց «սորվածը» ի գործ կը դնեն: Բայց ուրիշ բան մը եւս կայ՝ ժամանակները փոխուած են. օրինակ, կը շարունակենք ըսել՝ «թերթ հրատարակենք, թերթին մէջ սա դնենք, նա գրենք»: Հիմա ամէն բան համացանցով է, ել-մակով (e-mail), եւ այլն: Այլ բան մը եւս՝ նուիրատուութեան հարցը. ՀԲԸՄ-ի Չագըր հիմնադրամը ըլլալէ ետք, ոչ ոք նուիրատուութիւն կ'ընէ: Այսօր աւելի ծանրացած է երեւոյթը, որովհետեւ Առաջնորդարանը բոլոր ակումբներուն յատկացումներ կ'ընէ: Ոչ ոք կ'ուզէ նուիրատուութիւն ընել, երիտասարդները չեն տեսներ մարդոց նուիրատուութիւն ընելը եւ անշուշտ չեն սորվիր SQL:

Չրուցող - Շատ ճիշդ էք. ոչ միայն նիւթական, այլ նաեւ աշխատանք տալ, ծառայելու կամեցողութիւն ունենալ ...

Բ. Մ. - Նաեւ մարդոց կեցուածքը փոխուած է՝ «դուք ունի՞ք, դո՛ւք տուէք»: Բայց ասիկա ուրկէ՞ եկած է՝ մեզ նախորդող եգիպտահայոց նուիրատուութիւններէն, որոնք ազգին տուած են: Օրինակ, ժամանակին երբ պարահանդեսներ պիտի կազմակերպուէին, տիկինները կ'երթային լօ հաւաքելու, կ'աշխատէին: Կամ օրինակ Հելիոպոլսոյ Միսիթարեան վարժարանը, Այծեմնիկի կողքին: Հայր Բարսեղ մը կար, Ֆերիատեան, որ մեծ գումարներ չունէր իր տրամադրութեան տակ. ճարտարապետ Հրազդան Պալեանին հետ համաձայնեցաւ եւ Պալեանը շէնքին յատակագիծերը պատրաստեց, ուրիշներ այլ օգնութիւններ ըրին, եւ մարդը կրցաւ դպրոցին շէնքը կառուցել: Իմ մտահոգութիւնս այն է, որ նոր սերունդը տալ չի սորվիր, չէ սորված:

Չրուցող - Համացանցին պարագան նշեցիք. ատիկա շատ լաւ է. բայց չէ՞ որ լեզուն պէտք է սորվին, համացանցին մէջ գրելու համար. գիրը, գրելը նոյնն են, սովորական հրատարակութեան թէ համացանցային հրատարակութեան համար: Անգլերէնը կա՞յ, այո, բայց ո՞ր է հայերէնը: Ասոր մէջ դպրոցը դեր ունի. բայց դպրոցէն աւելի՝ ծնողները դեր ունին, ժխտական դեր ունին, երբ կ'ըսեն՝ «հայերէն մի՛ սորվիր, հայերէնը կարելոր չէ»: Ո՞ր է ասոր վերջը ...

Բ. Մ. - Դժբախտաբար ես դպրոցին հետ կապ չունիմ, ոչ հոգաբարձութիւն, ոչ այլ առնչութիւն:

Չրուցող - Երանի ըլլայիք դպրոցին առնչուած մարմնի մը մէջ, որովհետեւ պէտք են մարդիկ, որոնք կարենան ծնողներուն ըսել, թելադրել որ «հայերէնը կարելոր չէ» ըսելով մենք, որպէս գաղութ եւ հաւաքականութիւն, միայն վնաս կը կրենք, որովհետեւ լեզուն իր վրայ մեծ ծանրութիւն կը կրէ՝ մեր մշակոյթը, մեր ամանդութիւնները, մեր բարքերը: Երբ ասոնք կորսուին, մէկ քայլ կը մնայ մինչեւ խառն ամուսնութիւնները, որոնք կը հիւծեն մեզ: Ի՞նչ է ձեր կարծիքը:

Բ. Մ. - Այդ մասին կը ձգեմ որ ուրիշներ խօսին. շատ դժուար է:

Չրուցող - Ինչո՞ւ դժուար է:

Բ. Մ. - Որովհետեւ դժբախտաբար այսօր հայերէն սորվելու բաւարար մղիչ գործօններ (մղօններ) չկան:

Չրուցող - Սակայն հարցը միայն լեզուի հարցը չէ, այլ անհատականութեան, հայու խառնուածքին, տեսակին հարցն է, որ կը կորսուի արդէն, եւ ոչ ոք ուշադրութիւն կը դարձնէ այդ կորուստին. անոր գիտակցութիւնը չկայ դժբախտաբար: Ըստ ձեզի՝ ի՞նչ է գաղութին ապագան:

Բ. Մ. - Գաղութը կը փոքրանայ, դժբախտաբար. ա՛յս է իրականութիւնը. շատ ծանր հարց է ասիկա:

Չրուցող - Վերջին հարցում մը՝ ձեր միութենական ամբողջ գործունեութեան մէջ ո՞րն է ամենէն կարելորդը:

Բ. Մ. - Թե՛ ՀԲԸՄ-ի եւ թե՛ Աղքատախնամի գործունեութիւնս հաւասարապէս կարելոր կը նկատեմ: Նոր սերունդը շատ բան տեսած չէ, շատ բանէ գաղափար չունի, ինչպէս օրինակ կենցաղավարութիւնը: Ուրախ եմ որ իմ երիտասարդութեանս եղած եմ մեծ անուններու հետ, որոնցմէ շատ բան սորված եմ: Այդ բոլորը նոր սերունդին փոխանցելը շատ կարելոր կը նկատեմ:

Չրուցող - Ծիշդ էք, բայց ո՞ր պիտի ըլլայ այդ փոխանցումը:

Բ. Մ. - Ակումբներէն ներս, առանց խօսքի, առանց դասախօսութեան. պարզապէս ճիշդ վարուելով, ճիշդ ձեւով միութենական աշխատանք տանելով:

Չրուցող - Շնորհակալութիւն:

Չրոյցը վարեց՝ Մ. Երամեան

AVC-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀՈՒՆՁ-ՔԸ



Շաբաթ, 17 Դեկտեմբեր 2016-ին տեղի ունեցավ հայերեն լեզուի AVC դասընթացքներու մասնակցողներուն վկայագրերու յանձման հանդիսությունը, ԶԲԸՄ-ի Սաթենիկ Չազըր կեդրոնի գողտրիկ սրահէն ներս:

Այս դասընթացքները Գահիրէի մէջ թեւակոխած են իրենց երկրորդ տարին:

Բոլոր մասնակցողներն ալ, այս կամ այն չափով, կապուած են հայութեան՝ մէկուն մեծ մայրը հայ եղած է, միւսին ամուսինը հայ է, երրորդը հայ Կաթողիկէ համայնքին կը պատկանի եւ թերեւս կ'ուզէ արդարացնել «հայ» բաժինը իր դաւանանքին ...

Շաբաթական երեք օրերու վրայ կատարուող դասընթացքը արդէն պիտի ունենայ իր երրորդ մակարդակը (ինչպէս կը կոչուին դասերը, որոնք ունին ինը մակարդակներ):

Տիկին Աննա Թրայեանի խօսքով սկսաւ հանդիսութիւնը.

«Նախ կ'ուզեմ վեր առնել ամուսնոյս՝ Գեղամ Թրայեանի յիշատակը, որովհետեւ ան էր որքաջալերած էր զիս այս ձեռնարկը սկսելու համար»:

Ապա հանդիսութեան բացումը կատարելու համար հրաւիրեց ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի Ատենապետ Տոքթ.Վիգէն Ճիգմէճեան, որ արաբերէն լեզուով բարի գալուստ մաղթելէ ետք, ըսաւ.

«Ուրախ ենք ի տես մասնակիցներու մեծ թիւին: Հայերէնը մեզի՝ համար իսկ դժուար է, ալ ուր մնաց անոնց, որոնք չեն խօսիր զայն: AVC-ն լաւ միջոց է ոչ միայն լեզուն սորվելու, այլ գիտցածը բարելաւելու համար: Թերեւս երբեմն յուսահատիք, բայց գիտեք անշուշտ որ յարատեւութեամբ եւ քիչ մը ճիգով կրնա՝ քմերլեզուն սորվիլ»:

Ապա շնորհակալութիւն յայտնեց տիկ.

Աննա Թրայեանին, որ այս դասընթացքներուն ետին կեցող «շարժիչ ոյժն» է, դասատու տիկիններուն՝ Լալա Շամամեանին եւ Սիլվա Սիմոնեանին, եւ ճատրակի դասատուներ՝ Էտի Գասապեանին եւ Խաչիկ Գասապեանին:

Ծրագիր կայ լեզուէն անդին նաեւ պատմութեան, երաժշտութեան եւ ընդհանրապէս մշակութային նիւթերու դասընթացքներ սկսելու:

Հանդիսութեան ընթացքին իրենց վկայագրերը ստացան նաեւ ճատրակի հետեւող եօթը աշակերտներ, որոնց տարիքը «եօթէն եօթանասունեօթն» է, ինչպէս յաճախ կ'ըսուի կատակով:

Երեւանէն սքայփով կապուեցան դասընթացքներուն պատասխանատուները եւ իրենց բարեմաղթութիւնները ըրին վկայագրեր ստացողներուն:

Երկրորդ տարուան աշակերտներէն ճորճ Լաուանտի, որուն կինը հայ է, իր գրած հայերէն կարճ խօսքը կարդաց, շնորհակալութիւն յայտնեց դասատուին եւ ըսաւ.

«Ինծի համար հայերէն սորվիլը երազ մըն էր»:

Բոլոր անոնք որոնք վկայագրեր ստացան, նաեւ գիրքեր ստացան որպէս նուէր եւ գնահատանք իրենց աշխատանքին:

Երկու կիթառիստներ՝ Սեզար Մօրա եւ Օմար Մուհամմէտ գուգանուագով ելոյթ ունեցան եւ ներկաներուն հրամցուցին Կաքաւիկն ու Քոչարին:

Հանդիսութենէն ետք բոլորը հիւրասիրուեցան թէյով եւ խմորեղէնով, ուրախ զրոյցներով ավարտելու համար այս հանդիսութիւնը, որ կարծես ականդութիւն պիտի դառնայ Գահիրէի հայերուն համար:



«ԱՐԱՔՍ»Ի ԵԼՈՅԹԸ



Հանճարեղ մարդիկ կը ծնին մարդկության մատուցելու իրենց տաղանդին արգասիքը: Անոնց ստեղծած բարձրորակ արուեստին շնորհիւ կը հղկուին մարդկային ճաշակն ու գեղեցիկ արուեստին ըմբռնումը: Անոնց ընտիր արուեստն է որ կը ստիպէ մեր մտքին ու գրիչին թռիչք առնել, եւ ամենէն նուրբ ու գեղեցիկ բառերով գնահատել անոնց ստեղծագործութիւնը: Այդպիսի արուեստագետներու փաղանգին մաս կը կազմէ հայ երաժիշտ Խաչատուր Աւետիսեանը:

Մեծ է Խաչատուր Աւետիսեանի աւանդը հայկական երաժշտական գանձարանին մէջ: Ան կը շարունակէ մնալ բոլոր ժամանակներու սիրուած երաժիշտը: Հակառակ ժամանակակից երաժշտութեան վայելած ժողովրդականութեան եւ ոճերու զանազանութեան, Խաչատուր Աւետիսեանի ստեղծած ժառանգութիւնը կը պահէ իր ուրոյն տեղը, եւ դեռ երկար ժամանակ պիտի շարունակէ մնալ հայ ժողովուրդին համար հոգեհարազատ եւ սիրելի երաժշտութիւն:

Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբի այս տարուան ելոյթը ամբողջութեամբ նուիրուած էր տաղանդաւոր երաժիշտին ծննդեան ինստուն ամեակին:

Այս առիթով տպուած յայտագրի էջերուն խումբին ղեկավար Միհրան Ղազէլեան այսպիսի բառերով կը բնութագրէ Խաչատուր Աւետիսեանի արուեստը.

«Արուեստագետի մը երազանքները ստեղծագործութեան ընդմէջէն է որ կեանքի կը կոչուին ու մարմին կ'առնեն: Երբ անոնք կ'անցնին ժամանակի փորձութենէն, շարունակելով վայելել հանրութեան սերը, կը նշանակէ որ անոնք արդէն մաս կազմած են ժողովուրդի կեանքին՝ ապահովելով այդ երկերուն անմահութիւնը: Սա է երգահան Խաչատուր Աւետիսեանի ստեղծագործութեան անմահութեան ճամբան»:

Մեծ երաժիշտին վայելած ժողովրդականութեան շնորհիւ «Արաքս»ի նման երգչախումբ մը, որ տասնեակ տարիներէ ի վեր երգչախմբային արուեստը կանգուն կը պահէ Եգիպտոսի գաղութին մէջ, բնականաբար այս տարուան իր ելոյթը պիտի նուիրէր մեծ երաժիշտին ծննդեան ամեակին:

Տարուան մը երկար աշխատանքէն ետք, Կիրակի, 4 Դեկտեմբերին Հելիոպոլսոյ Գրադարանէն ներս հաւաքուած հասարակութիւնը ըմբռնեց մեծ երաժիշտին արուեստը:

Բժախնդրօրէն ընտրուած յայտագիրը

կը պարունակէր տարբեր ժամանակներու յօրինուած ամենէն յայտնի երգերը: Յայտագրին առաջին մասը կ'ընդգրկէր «Կռունկները», «Իմ Լաւ, Իմ Լաւ», «Երգ

«Իմ Եղեգ»ը, «Իրիկնային»ը, «Առաւօտեան Երեւան»ը: Համերգը եզրափակուեցաւ «Կենաց Երգ»ով:

Համերգի աւարտին բեմ հրաւիրուեցաւ



Բարեկամութեան», «Իմ Գիւմրի», «Հագարաթեւ Հայաստան»: Յայտագրին առաջին մասին վերջին երեք երգերը՝ «Ով Հայոց Սարեր», «Մայրիկիս» եւ «Մեր Աշխարհ» ներկայացուց Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի «Արցախ» երգչախումբը: Յայտագրին առաջին բաժնին մէջ մեներգով հանդես եկաւ Սիլվա Թերզիպաշեան, որ ներկայացուց «Իմ Տաւիղ» երգը, ինչպէս նաեւ յայտնի երգահանին «Միայն Քեզ Համար» երգը ներկայացուցին Թալին Գալիշեան, Նանոր Արիկեան, Ալին Ասլանեան, Սօսէ Կրպոյեան, Նակի Գալալեան եւ Սերժ Սէտեֆեան:

Ելոյթի երկրորդ մասը կ'ընդգրկէր տասը երգեր: Առաջինը Աւետիսեանի շատ յայտնի «Մախմուր Աղջիկ»ն էր, զոր մեներգեցին Սիլվա Թերզիպաշեան եւ Նորա Քեօհնէլեան: Երաժիշտին այլ շատ յայտնի եւ համբաւ վայելող «Ծաղկած Բալենի»ն մեներգեցին Թամար Սապրի, Լիւսի Սանճեան, Լուսածին Ղազէլեան, Հռիփսիմէ Մուրատեան, Ռիթա Կոտուրջեան եւ Ռուպինա Սաատ: «Սեւ Աչերով Աղջիկ» երգը զուգերգով ներկայացուցին երգչախումբի հինգէլ երկու երիտասարդները՝ Ռուբէն Սաատ եւ Վարդան Թերզիպաշեան: Այստեղ նշենք որ Ռուբէնը նաեւ առանձին մեներգով ներկայացուց մեծ երաժիշտին յայտնի երգերէն մէկը՝ «Սիրուս Կը Սպասեմ»ը: Ապա յաջորդաբար ներկայացուեցան «Հայոց Հովիկ»ը,

ՀՀ Արտակարգ եւ Լիազօր դեսպան դոկտ. Արմէն Մելգոնեան, որպէսզի խումբին ղեկավար Միհրան Ղազէլեանի յանձնէ Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած «Հայապահպանութեան Գործում Նշանակալի Աւանդի Համար» մրցումին վկայականները: Նշենք որ սոյն մրցոյթին Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի «Արցախ» խումբը «Լաւագոյն Գեղարուեստական խումբ» մրցանակարգին գրաւած էր երրորդ դիրքը, իսկ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբը տոյն մրցոյթին արժանացած էր առաջին մրցանակի եւ մետալի:

Վարձքը կատար բոլորին, որոնք տարուան մը հետեւողական աշխատանքէ ետք, վայելեցին իրենց նուիրական աշխատանքին արդիւնքը:

Երան Չէթունցեան





«The Land of Legends» «ԱՌ-ԱՍՊԵԼՆԵՐՈՒ ԵՐԿԻՐԸ» Բիհամ Աֆիֆի

Ինչպես միշտ, այս անգամ եւս ուրախութիւնը գինովցուցեր է մեզ, ի տես օտարի մը, որ իր ազատ կամքով մօտեցեր է հայութեան, համակրեր է ժողովուրդին, գացեր է տեսնելու Յայաստանը եւ ... վերջնականօրէն հմայուեր մեր երկրով:

Բիհամ Աֆիֆի եգիպտոսի արաբ ակնաբոյժ մըն է, որ Տուպայ կ'ապրի ու կ'աշխատի, եւ Եղեռնի հարիւրամեակին Եգիպտոսի պատուիրակութեան հետ Յայաստան հրաւիրուած էր եգիպտահայ գաղութին հրաւերով, մասնակից դառնալու պաշտօնական հանդիսութիւններուն:

Թէ ճիշդ երբ, ո՛ր պահուն է որ Աֆիֆիի սիրտը «կաեր է» մեր երկրին, կարելի չէ ըսել, բայց գիրքը որ ձեռքերուս մէջ է եւ կ'ամփոփէ արուեստագիտուհիին նկարներն ու խօսքերը, կը հաստատէ անոր ունեցած ապրումները ի տես մեր երկրին:

Այս գիրքը ձեռով մը ամփոփումն է այն ցուցահանդեսին, որ տեղի ունեցած էր Գահիրէի Փիքասօ (Չամալէք) նկարչական ցուցասրահէն ներս, Դեկտեմբեր երկուքին եւ երեքին:

Ցուցահանդեսը մեծ յաջողութիւն գտած էր. անոր անդրադարձած էին եգիպտական հեռատեսիլի կարգ մը կայաններ, նկարները ցուցադրելով եւ գրուցելով նկարչուհիին հետ:

Կ'ուզենք նշել նաեւ որ նկարները վաճառքի դրուած էին եւ հասոյթը տրամադրուած «Կեցցէ Եգիպտոսը» հիմնադրամին, ուսումնական ծրագիրներու համար, ըստ նկարչուհիի փափաքին:

Գիրքին սկիզբը շնորհակալական խօսք ուղղուած է եգիպտահայ գաղութի ակաւոր կարգ մը անձերու, որոնք օգնած են տիկ. Աֆիֆիի, իր ճամբորդութեան եւ հոգեկան բացայայտումին մէջ, ինչպէս եւ նկարներուն եւ զանոնք պարփակող գիրքի ծնունդին. յիշուած են անունները Մարլօ Սիմոնեանի, Շանթ Կապէեանի, Բժշ. Արմէն Մազլումեանի (բոլորը եգիպտահայ) եւ Գեղամ Մանուկեանի (Երեւան, Երկիր

Մետիայի լրատուական բաժնի տնօրէն): Յատուկ շնորհակալութիւն յղուած է Գահիրէի Ազգային Առաջնորդարանին, որուն Եղեռնի հարիւրամեակին մասնակցելու հրաւերը, արուեստագիտուհիին վրձինն ու գրիչը շարժող գլխաւոր մղիչը կը թուի ըլլալ:

ՀՀ Սփիւռքի նախարարուհի Յրանուշ Յակոբեան իր սրտի խօսքը ուղղած եւ երախտագիտութիւն յայտնած է նկարչուհիին, որ «կը զգայ հայ ազգին ցաւը եւ կը գնահատէ մեր ազգային դիմագիծն ու մեր ժողովուրդի հոգեբանութիւնը»:

Սրտի խօսք ունի նաեւ Միրիամ Չաքի, «Ո՞վ սպաննեց Յայերը» շարժանկարին բեմադրիչը, որուն գրութիւնը կը սկսի «Յայաստան ... ինչպէ՞ս կրնայ նման «գաղտնիք» այսքան երկար ժամանակ գաղտնիք մնալ» խօսքով:

Տիկին Աֆիֆիի շնորհակալական հակիրճ խօսքը վերջ կը գտնէ Astvats Orhni Dzez լատինատառ հայերէն բառերով:

Մէկ երկու հայերէն այլ բառեր եւս կարելի է գտնել գիրքին էջերուն մէջ պահուած, ինչպէս երբ կ'ըսէ Yerevats! Yerevats! կրկնելով ինչպէս երեւանցիներուն, նոյնպէս ալ սփիւռքահայերուն հրճուանքը ի տես Արարատին, կամ երբ vitkhari բառը կ'օգտագործէ:

Սիրողական վրձինի մը համար իրապէ՛ս անսպասելի սրբութիւնն ու գոյներու զգայնութիւնը յստակօրէն կը հմայեն ակնդիրները, նոյնիսկ գիրքին էջերէն: Երբեմն անսովոր դիտանկիւնը մեզի այնքան սովորական վայրերու, կը ստիպէ որ յիշենք թէ նկարչուհին հայ մը չէ, բայց ունի մեր երկրին բիրտ գեղեցկութիւնը զգալու եւ զայն ներկայացնելու գեղարուեստական շնորհ:

Նկարներուն ընկերակցող խօսքերը նոյնքան նուրբ են եւ յուզաթաթաւ. իր ապրումները, մանաւանդ Յայաստանի բնութեան գեղեցկութենէն ներշնչուած, անմիջական են եւ գեղեցիկ:

Վերջին էջին մէջ գետեղուած են Լեւոն

Մկրտչեանի բառերը.

«Եթէ Չուարթնոցի տաճարը այցելէք, որե՛ք ձեր ափերը քանդակուած նուէրուն վրայ, որոնք տաք են տակաւին: Հայոց երկնքի արեւը մեզի կը բերէ շունչն ու տաքութիւնը այն ափերուն, որոնք քանդակեցին զանոնք, ոչ շատ ժամանակ առաջ ... եօթներորդ դարուն»:

Իսկ վերջընթեր էջը կը պարփակէ նկարչուհին վերջին խօսքը Հայաստանի մասին.

«... գիտենք թէ ո՛ր որ մարդ արարածն է, հոն ալ նենգութիւնն է եւ ազահութիւնը: Անարդարութիւնն ու չքաւորութիւնը մարդկային բնութեան այլ երեսակները կը կազմեն»:

«Մեզի կը մնայ գեղեցկութիւնը տեսնել,

կամ՝ նենգութիւնը»:

Որքան լաւ պիտի ըլլար եթէ տիկ. Աֆիֆի նկարներուն ընկերացող իր գեղեցիկ խօսքերուն մէջ նշէր նաեւ պահը այս սիրոյ ծնունդին, եւ ըսէր թէ ճիշդ ի՛նչն է որ այնքան ջերմօրէն կը գնահատէ մեր երկրին եւ ժողովուրդին մէջ, որովհետեւ երբեմն օտարի աչքով ինքզինք դիտելը իր դրական կողմը ունի նաեւ:

Գնահատելի եւ Գահիրէի Հայոց Առաջնորդարանն ու Հայ Դատի Եգիպտոսի Ներկայացուցիչը, որոնց աջակցութեամբ եւ նախաձեռնութեամբ է որ տեղի ունեցած է ցուցահանդէսն ու հրատարակուած՝ «Առասպելներու Երկիրը» նկարներու ալպոմը:

Մ. Երամեան





ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ը ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՓԱՅԼՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ուրբաթ, 9 Դեկտեմբեր, 2016-ին, Գահիրեի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբին մեջ տեղի ունեցավ Գահիրեի ՀԲԸՄ-ի կազմակերպած աւանդական տարեկան հանդիսութիւնը, ի պատիւ եգիպտահայ փայլուն ուսանողներուն: Գերազանցութեան վկայագրեր, նուէրներ եւ նիւթական պարգեւներ յանձնուեցան Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ հայ համայնքներու ուսանողներուն, որոնք փայլուն արդիւնքներով աւարտած էին 2015-2016-ի կրթական տարեշրջանը:

Այս հանդիսութիւնը, որ կը կազմակերպուի 2001 թուականէն ի վեր, շնորհիւ Միութեանս Սաթենիկ Զագըր հիմնադրամին, գնահատանքի եւ քաջալերանքի արտայայտութիւն մըն է հանդէպ եգիպտահայ այն ուսանողներուն, որոնք փայլուն արդիւնքներով կ'աւարտեն իրենց կրթական շրջանը:

Հանդիսութիւնը սկսաւ Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչութեան ատենապետ տոքթ. Վիգէն Ճիգմէճեանի բացման խօսքով:

Ան շնորհաւորեց ներկայ ուսանողները, իրենց ձեռք բերած արդիւնքներուն համար եւ խրախուսեց զիրենք որ հետեւողական աշխատանքով իրենց անհատական եւ ընկերային կեանքին մէջ եւս պատուաբեր յաջողութիւններ արձանագրեն:

Ապա տեղի ունեցաւ մրցանակաբաշխումը: Այս տարի պարգեւատրուեցան 38 ուսանողներ. 23 Գահիրէէն եւ 15 Աղեքսանդրիայէն (վերջին երեք տարիներու շրջանաւարտներուն թիւը):

Նախակրթարանի բաժնէն, Գահիրէէն պարգեւատրուեցան ութ շրջանաւարտներ՝

Անդրանիկ Յակոբեան	98.8%
Նունէ Թորոսեան	96.8%
Մհեր Քեօհնէլեան	95.5%
Լիա Նիկոլեան	94.9%
Քրիս Զըլլոյեան	94.8%
Սեւան Պալթայեան	93%
Արմէն Ժամկոչեան	92.3%
Սասուն Կրպոյեան	90.6%:

Իսկ Աղեքսանդրիայէն նոյն բաժնէն՝

Պերճ Թօփալեան	98.8%
Կարօ Պահարեան	96.7%
Մելիսա Թաճերեան	96.2%
Խաչիկ Փափագեան	94.3%
Լուսին Մազլումեան	92.8%
Վահրամ Թօսունեան	92.6%
Ալոտարա Խոսրով	92.2%
Քրիստին Ուասէֆ	90.6%:

Պատրաստականի բաժնէն, Գահիրէէն պարգեւատրուեցան չորս շրջանաւարտներ՝

Ռիթա Զամբերթէնեան	97.6%
Նաթալի Կոտոլոշեան	96.6%
Ժօէլ Շաքարճեան	96.4%
Լիլիթ Սայեան	94.5%:

Իսկ Աղեքսանդրիայէն՝ երկու աշակերտներ,

Մելանի Թփալեան	97.1%
Սեւան Մարտիկեան	97%:

Երկրորդականի բաժնէն, Գահիրէէն պարգեւատրուեցան հետեւեալ չորս շրջանաւարտները՝

Մանէ Ճիգմէճեան	17.44
(Ֆր. պաք, գերազանց),	
Ճուլիա Աւանեան	3.99
(ամերիկեան վկայական),	
Մարիան Աբիկեան	3.91
(ամերիկեան վկայական)	
Քրիստինա Անդրեասեան	95%:

Իսկ Աղեքսանդրիայէն նոյնպէս չորս աշակերտներ՝

Ալին Գաւուքճեան	103%
Արմէն Կիրիտեան	97.5%
Րաֆֆի Գալայճեան	97%
Նաթալի Թփալեան	90.7%:

Գալով համալսարանաւարտներուն, Գահիրէէն գերագանց արդիւնքով շրջանաւարտ եղած են

Լիւսի Սանճեան եւ
Երամ Թորոսեան,

իսկ «շատ լաւ» արդիւնքով՝

Վարդան Թերզիպաշեան,
Աբրահամ Պոյաճեան եւ
Րաֆֆի Սուլթանեան:

Իսկ Աղեքսանդրիայէն՝
Տարօն Խունկանեան,
գերագանց արդիւնքով:

Masters-ի եւ PhD-ի տիտղոսներուն տիրացած են յաջորդաբար

Մարի Իսքէնտերեան
Յարօ Գարգուր:

Վկայագրերու առնչութիւն թուր պարգեւատրուողները ստացան նաեւ գիրքեր եւ
նիւթական պարգէւներ, համապատաս-

խան իրենց ստացած վկայականներուն:

Այսպէս՝ նախակրթարանի բաժնէն շրջանաւարտը ստացաւ 250 ե.ո., պատրաստականի բաժնէն շրջանաւարտը՝ 500 ե.ո., իսկ երկրորդականի բաժնէն շրջանաւարտը՝ 1000 ե.ո.:

«Շատ լաւ» յիշատակութեամբ համալսարանաւարտը ստացաւ 1500 ե.ո., իսկ գերագանց արդիւնքովը՝ 2000 ե.ո.: Masters-ի պարագային յատկացուած պարգէւը 2500 ե.ո. է, իսկ PhD.-ինը՝ 5000 ե.ո.:

Մրցանակները շրջանաւարտներուն յանձնուեցան Գահիրէի ԶԲԸՄ-ի վարչութեան անդամներուն եւ Աղեքսանդրիոյ ԶԲԸՄ-ի ատենապետին ձեռամբ:

Մրցանակաբաշխութեան աւարտին ցուցադրուեցաւ Հայաստանի կրթական հաստատութիւններուն մասին վաւերագրական կարճ տեսերիկ մը:

Կը շնորհաւորենք թուր շրջանաւարտները եւ անոնց կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

*ԶԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ժիզմէճեան*









ՎԱԶԳԷՆ ԷՔՍԵՐՃԵԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 16 Դեկտեմբեր, 2016-ի կեսօրուան ժամը 12:30-ին, Գահիրեի ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐ-ի հետաքրքրասեր անդամներն ու համակիրներն շատեր եկած էին ունկնդրելու եգիպտահայ առաջին ու ցայսօր միակ Yogi-ին՝ Վազգեն Էքսերճեանի դասախօսութիւնը:



Վազգեն Էքսերճեան իր նախնական ուսումը ստացած է Հելիոպոլսոյ Նուպարեան Ազգային Վարժարանին մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ English School-էն ներս: Հետեւած է ճարտարապետութեան, Գահիրեի Էյն Շամս համալսարանը, զոր աւարտած է 1984-ին: Մեկնած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ, ուր հետեւած է Yoga-ի եւ կիրարկած՝ բուսակերութիւնը: Yoga-ի եւ մտախոհութեան (meditation) «արուեստներուն» տիրապետելէ ետք, դարձած է ուսուցիչ: Կամաւոր կերպով աշխատած է եւ տակաւին կը շարունակէ աշխատիլ որպէս ընկերային ծառայող (social service), աղէտեալ շրջաններու մէջ:

Աշխատած է աշխարհի զանազան երկիրներու մէջ եւ վերջին քսան տարիներուն ապրած է Ծայրագոյն Արեւելքի երկիրներէն Ճաբոնի, Չինաստանի, Մոնկոլիայի եւ Թայլանտի մէջ:

Ակումբին Տիկնանց Յանձնախումբի անդամներէն տողք. Հերմին Վարժապետեան հակիրճ կերպով ներկայացուց դասախօսը ունկնդիրներուն:

Պր. Էքսերճեան ակումբին սրահը լսարանի մը վերածած էր իր պարզ, սակայն տեղեկութիւններով լի ցուցակներով եւ գծանկարներով:

Թէպէտ դանդաղ ու մեղմակաւ, երբեմն նոյնիսկ կարծէք մտովին կը սաւառներ դէպի աներեւոյթ վայրեր, սակայն իր հեզ ու արտայայտիչ աչքերով – բարի ժպիտով կարողացաւ ներկաներուն համակրանքին ու յարգանքին արժանանալ:

«Երբ Yoga բառը լսէք, մարզանքի վարժութիւններ կու գան ձեր միտքը», ըսաւ ան, «ճիշդ էք. սակայն ատոնք Yoga-ին մէկ մասն են միայն – մտախոհութիւնն է որ կ'ամբողջացնէ զայն»:

«Yoga-ի շարժումները մկանները կոփելէ զատ, կը նպաստեն մտային առողջութեան», ըսաւ դասախօսը բացատրեց. «քանի որ այդ ձեւերը դրական ազդեցութիւն ունին մարդ արարածին բոլոր գեղձերուն վրայ: Արդի կեանքին պայմանները արգելք կ'ըլլան որ մարդ կարենայ հաւասարակշռութիւն պահել իր նիւթական, մտային եւ հոգեկան կեանքերուն միջեւ: Yoga-ն, մտախոհութիւնն ու ճիշդ նշանակութիւնը առիթը կ'ընծայեն ուղեղին, որ ձեր բազմապատկար տարա-

քին նիւթական ճնշումներէն ու դառնայ նուազ եսապաշտ, որպէսզի կարողանայ կեդրոնանալ վսեմ գաղափարներու վրայ ու հասնի ԵՐԱՆՈՒԹԵԱՆ (BLISS)» ըսաւ ան գոհունակ ժպիտով, կարծէք արդէն իսկ բոլորս ալ հասած ըլլայինք այդ բաղձալի, սակայն դժուար հասանելի վիճակին:

Այա դասախօսը անցաւ ճիշդ սենդականոնի եւ բանջարակերութեան բաժնին. «Մարդը ստեղծուած է որպէս բուսակեր արարածն է իր մարսողութեան գործարանը պատշաճ է այդ տեսակ սննդականոնի: Սակայն դարերու ընթացքին դարձած է նաեւ մսակեր», ըսաւ ափսոսանքով:

«Միսը դժուարամարս է. ուստի մեր փայծաղը, լեարդն ու երիկամները չարաչար կ'աշխատին մաքրելու համար մեր արիւնը: Ինչպէս որ միսը բեռ մըն է մեր գործարաններուն վրայ, այնպէս ալ բեռ մըն է անհատներու եւ երկիրներու տնտեսութեան վրայ» եզրակացուց դասախօսը:

«Միւս կողմէ», շարունակեց, «բոյսերը իրենց հասած արեւու ճառագայթները կենսուժի (Life Force) կը վերածեն ու կ'ամբարեն այդ կենսարար նիւթը, որպէսզի փոխանցեն զայն մարդուն», բացատրեցուրաք ժպիտով. «Որքան հում վիճակի մէջ ուտենք բանջարեղէններն ու պտուղները, այնքան աւելի կենսուժ կը նուիրենք մեր մարմնին», աւելցուց:

Ան շեշտեց ծոմապահութեան անհրաժեշտութիւնը եւ ըսաւ որ ամէն մարդ, առնուազն ամիսը անգամ մը, պէտք է ծոմապահութեամբ մաքրագտէ իր մարմինը:

«Yoga-ի, մտախոհութեան եւ բուսակերութեան միջոցով ոչ միայն առողջ կը պահենք մեր մարմինը, միտքն ու հոգին, այլ կը նպաստենք բնութեան ու կենդանիներու պահպանման» եզրակացուց դասախօսը:

Ունկնդիրները տակաւին տրամադիր էին մեծ հետաքրքրութեամբ մտիկ ընելու զինք, սակայն ճաշի ժամը հասած էր արդէն: Օրուան «խորհուրդ»ը անխախտ պահելու միտումով, ակումբին Տիկնանց Յանձնախումբը ներկաներուն հրամցուց աղջաններուէն ընդդէմներէ պատրաստուած ուտելիքներու ճոխ շքասեղան մը, ուր միսը կը բացակայէր իր բոլոր տեսակներով:

Վարձքը կատար Yogi Վազգեն Էքսերճեանին, իր շատ հետաքրքրական դասախօսութեան համար:

Սօսի Ներսիսեան-Յակոբեան



ԽԹՈՒՄԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՐՑ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 5 Յունուար 2017ին, ՀԱՐՑ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը, աջակցութեամբ Տիկնանց Յանձնախումբին, տօնեց Ս. Ծնունդի խթումը:

Տարուէ տարի ներկաներուն թիւը աճելով, սրահը այլեւս անյարմար դարձած էր հանգիստ կերպով տեղաւորելու բոլորը. ուստի այս անգամ, ակումբին աւելի քան 58 տարուան պատմութեան ընթացքին առաջին անգամ ըլլալով, շէնքին ետեւի լքուած թէնիսի դաշտի չափ տարածութիւնը վերջապէ՛ս գործածուեցաւ ու վերածուեցաւ պարահանդեսի գեղեցիկ սրահի մը:

Վրանածածկ քառանկիւն «դահլիճին» գետինը լրիւ գորգապատ էր. տասնըհինգ երկար սեղաններ ու երիտասարդներուն համար բարձր սեղան-աթոռներ, ներդաշնակ կերպով շարուած էին արդիական պարահարթակին շուրջ:

Երբ ակումբին անդամներն ու համակիրները մուտք գործեցին պատրաստուած սրահէն ներս, ափ ի բերան մնացին ի տես լոյսերով պսպղուն «պատերուն» եւ բարձր ճաշակով զարդարուած ու խորտիկներով լի սեղաններուն:

Ուրախալի էր որ երիտասարդներն ու պատանիները փութացած էին ներկայ գտնուելու այս տօնակատարութեան, մթ-

նոլորտը թարմացնելով:

Շուտով բոլոր սեղանները գրաւուեցան ու սիրուած երգիչ ճորճ Գարգուր սկսաւ իր ելոյթը Ֆրանսերէն, անգլերէն եւ իտալերէն սիրուած երգերու փունջով մը:

Ճաշի սպասարկութիւնը կատարուեցաւ կանոնաւոր ու արագ, եւ ներկաները վայելեցին ակումբի խոհարարին կողմէ պատրաստուած համեղ ուտեստները:

Մթնոլորտը աւելի ջերմացնելու համար, երգիչին դադարի պահուն, հնչեցին Թաթայի խանդավառ երգերը (ձայնագրութեամբ) ու շատեր շուրջպար բռնեցին:

Ժամանակը անզգալի կերպով կը յառաջանար. վիճակահանութեանատենն էր: Ներկաներէն տասնվեց բախտաւորներն ունէր ստացան:

Վարձքը կատար Գահիրէի ՀԱՐՑ ՆՈՒՊԱՐԻ վարչական անդամներուն, Նա-Տիկնանցի աշխոյժ անդամուհիներուն, որոնք կարողացած են Ս. Ծնունդի խթման տօնակատարութիւնը փնտռուած ու բոլորին կողմէ սիրուած հերթական ձեռնարկի մը վերածել:

Սօսի Ներսէտեան-Յակոբեան

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՅԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ



Ուրախութեամբ կը տեղեկանանք, որ Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի Գ. կարգի աշակերտուհի Մանէ Սայեան, պետական կիսամեայ քննութիւններուն ձեռք բերած է 100 % արդիւնք, ինչ որ աննախադէպ երեւոյթ է մեր համայնքին դպրոցական տարեգրութեան մէջ:

Զերմօրէն կը շնորհաւորենք Մանէն եւ իր ծնողքը՝ Տէր եւ Տիկնի Յակոբ եւ Յասմիկ Սայեանները, այս պատուաբեր արդիւնքին համար եւ նոյնանման յաջողութիւն կը մաղթենք իրեն, ամապերջի քննութիւններուն մէջ:



ԿԱՂԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՋԱՐ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Ուրբաթ, 23 Դեկտեմբեր 2016-ի կեսօրուան ժամը մեկին, օրուան նախագահուհի դուկտ. Գոհար Վարդուկեան բացումը կատարեց Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Տիկնանց Յանձնախումբին կողմէ կազմակերպուած Կաղանդի Պազարին:

Հոծ բազմութիւն մը խումբեց սրահէն ներս, ուր աւելի քան տասը սեղաններ կը ցուցադրէին հայկական աւանդական մանթըն, թոփիկը, ապուխտն ու երշիկը, լաիմաճունը, քուպէպան եւ չեօրէկը, ինչպէս եւ Տիկնանց յանձնախումբի անդամուհիներուն եւ օժանդակներուն կողմէ պատրաստուած անուշեղենն ու խմորեղէնը:

Աղեքսանդրիայէն հասած հայկական եւ կաղանդի նախշերով սեղանի ծածկոցները մեծապէս գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Կես ժամ չանցած, սեղանները արդէն իսկ մերկացած էին ու ներկաները գոհունակ ժպիտով, լեցուն տոպրակները ձեռքերնին, պարտեզի սեղաններուն շուրջ տեղ գրաւեցին ճաշելու համար: Թեպէտ ճաշը համեղ՝ սակայն սպասարկութիւնը դանդաղ էր ու անկանոն: Մատուցողներուն թիւը անհամեմատ էր ներկաներուն մեծ թիւին հետ, որոնք նոյն ժամունորոշեր էին ճաշել:

Ճաշի իրարանցումը հազիւ վերջացած, դաշնակահարուհի-երգեհոնահարուհի Օր. Արփի Ճանիկեան երգեհոնի վրայ կաղանդի ու ծնունդի եղանակներ նուագեց ու երգեց, տօնական մթնոլորտ մը ստեղծելով ակումբին մէջ: Հետաքրքրութենէ մղուած, փոքրիկները շրջապատեցին զինք ու շուտով սկսան մասնակցիլ երգերուն, միեւնոյն ժամանակ անհամբեր սպասելով Կաղանդ Պապային, որ ակումբ պիտի այցելէր ժամը 4ին:

Կաղանդ Պապայէն այլեւս ո՛չ վախցող, ո՛չ ալ ամէցող կայ. փոքրիկները, մէկը միւսէն աւելի համարձակ, իրարու հետ կը մրցէին, ոտաւաւորներ արտասանելու եւ Կաղանդ Պապային հարցումներուն պատասխաններ տալու համար: Բոլորը նուէրներ ստացան եւ Կաղանդ Պապան քիչ մը պարելէ ետք, հրաժեշտ տուաւ:

Վարձքը կատար Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներուն, նա- սիրայօժար կերպով օժանդակած տիկիներուն, յաջող պազար մը կազմակերպելու համար:

Սոսի Ներեւտեան-Յակոբեան

ԿԱՂԱՆՈՒԹՅԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Նոր Տարին համագաղութային ձեւով դիմաւորելը իւրայատուկ երեւոյթ մը դարձած է երկու տարիէ ի վեր Գահիրեի մէջ, շնորհիւ Ազգային Իշխանութեան բարոյական - նիւթական աջակցութեան:

31 Դեկտեմբեր 2016-ի Կաղանդի պարանցիկ երեկոն, որ տեղի ունեցաւ Հելիոպոլիս 2 քեղագոյն պանդոկներէն Fairmont Heliopolis and Towers-ի մէջ, յաջողութիւն արձանագրեց բոլոր մակարդակներուն վրայ:

2015-ի Դեկտեմբերին, Գահիրեի Ազգային Իշխանութիւնը, գլխաւորութեամբ Եգիպտահայոց Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ Քաղաքական Ժողովի Ատենապետ Տոքթ. Գեորգ Երզնկացեանի, գեղեցիկ գաղափարը ունեցած էր միախմբելու գաղութին տարբեր ակումբներու համակիրները, առիթը ընծայելու համար բոլորին, յատկապէս հայ երիտասարդներուն, հանդիպելու եւ մտերմանալու:

Հիմնուելով ներկաներուն խանդավառութեան վրայ, 31 Դեկտեմբեր, 2016-ի ձեռնարկին

համար, Գահիրեի մշակութային ու մարզական ակումբներէն, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Կոկանեան Սրահէն Մարլին Աւանեան, Ռուբէն Սիմոնեան, Սարո Պըլըքտանեան եւ Ալէն Գարգուր, իսկ ՀՄԸՄ Արարատէն ու Յուսաբեր Ակումբէն Գարօլին Մազլումեան, Նորա Բարմաքեան եւ Սիւզի Լաչինեան, Նոյեմբերէն իսկ սկսած էին նախապատրաստական աշխատանքներու:

Տրուած ըլլալով որ Կաղանդը ընտանեօք տօնելը աւանդութիւն է, տոմսերուն գինը պէտք էր որ մատչելի ըլլար. կազմակերպիչ յանձնախումբը կարողացաւ երիտասարդներուն գեղջեալ գինով տոմսեր տրամադրել:

Վարձքը կատար Գահիրեի Ազգային Իշխանութեան ու կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն, որոնք կարողացան Կաղանդի ուրախութիւնը կրկնապատկել եւ այս բացառիկ ձեռնարկով անմոռանալի պահեր պարգեւեցին ներկաներուն:

Սոսի Ներեւտեան-Յակոբեան

ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ



Ուրախութեամբ կը տեղեկացնենք թէ Գահիրէի ԶԲԸՄ-ի անդամուհիներէն Անի Պօղոսեան-Թաշճեան եւ ամուսինը՝ Ռոպէր, իրենց առջինեկ դուստրէն ետք բախտաւորուած են մանչուկով մը՝ Նարէկ:

Այս առիթով «Տեղեկատու»-ն իր ջերմ խնդակցութիւնները կը յայտնէ նորածինին ծնողներուն, մեծ ծնողներուն՝ Տէր եւ Տիկին Պօղոս եւ Յասմիկ Պօղոսեաններուն, եւ նորածինին առողջութիւն, երջանկութիւն ու խաղաղ կեանք կը մաղթէ:

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



«Տեղեկատու»-ն խոր կսկիծով կը գուժէ մահը իր նախկին խմբագիրներէն Արաքսի Տեօվէթեանին, որ տասը տարիներ սիրայօժար վարած է թերթիս խմբագրութիւնը:

Թաղման արարողութիւնը տեղի ունեցած է Զինգշաբթի, 26 Յունուար 2017-ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, որմէ ետք հանգուցեալին մարմինը ամփոփուած է Զելիոպոլսոյ Ամենայն Սրբոց գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ:

Յուղարկաւորութեան ներկայ էին ԶՅ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեան, ինչպէս եւ Գահիրէի Թեմական եւ Զաղաքական ժողովներու ատենապետներն ու անդամները, մշակութային եւ մարզական միութիւններու ատենապետներ, վարչականներ եւ հոծ բազմութիւն մը:

Արարողութեան կը նախագահէր Եգիպտոսի Զայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Աշոտ Եպս. Մաացականեան, ընթերակայութեամբ Զոգեշնորի Տ. Գաբրիէլ Վրդ. Սարգիսեան եւ Արժանապատիւ Տ. Յակոբ Քհնյ. Յակոբեան: Առաջնորդ Սրբազանը իր խօսքին մէջ վեր առաւ ննջեցեալին բարեմասնութիւնները եւ գնահատեց անոր դերը եգիպտահայոց կեանքին մէջ:

Բարեգործականի Եգիպտոսի շրջանակին անունով դամբանական խօսեցաւ ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Պատուոյ Ատենապետ տիար Պերճ Թերզեան եւ ներկայացուց հանգուցեալին կենսագրականն ու անոր ազգային-հասարակական գործունեութիւնը:

«Տեղեկատու»-ն կը ցաւակցի հանգուցեալին զաւակներուն՝ Տեարք եւ Տիկնայք Զրայր եւ Կասիա Ճղալեաններուն, Վահան եւ Մարալ Ոսկեաններուն եւ Էմմանուէլ եւ Կարինէ Սիկալասներուն, անոնց ընտանիքներուն, բոլոր հարազատներուն եւ զինք ճանչցողներուն:

